ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
ԱՐՄԱՆ ԱՇՈՏԻ ԱՍՐՅԱՆԻՑ
ՀԱՍՑԵ՝ ՀՀ, Ք. ԵՐԵՎԱՆ, ՄԱՐԳԱՐՅԱՆ Փ., 33 Շ., ԲՆ. 21
ԷԼ. ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵ՝ arman.asryan@yahoo.com
ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ՝ +37498600270

# Դ Ի Մ ՈՒ Մ

Հարգելի՛ պարոն Հարությունյան,

2012 թվականին ոսկե մեդալով ավարտել եմ Կապանի թիվ 2 ավագ դպրոցը և պետպատվերի շրջանակում ընդունվել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրիատ՝ ստանալով պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունք: 2016 թվականին գերազանցությամբ ավարտելով ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրիատը՝ դարձյալ պետպատվերի շրջանակում ընդունվել եմ նույն ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնի մագիստրատուրա ու կրկին ստացել տարկետման իրավունք: 2016-2018 թվականներին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարական կրթաթոշակի ծրագրի շրջանակներում սովորել եմ նաև Ցինխուայի համալսարանում (ք. Պեկին) ու ձեռք բերել «Կառավարման գիտություն և ճարտարագիտություն» մասնագիտությամբ մագիստրոսի աստիճան:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 796-Ա որոշմամբ ինձ տրվել է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունք՝ ասպիրանտուրայի կրթական ծրագրով սովորելու համար: 2020 թվականի օգոստոսի 24-ին ՀՀ ԲՈԿ-ի Տնտեսագիտություն - 015 մասնագիտական խորհրդում պաշտպանել եմ թեկնածուական ատենախոսություն՝ «Բնակարանային ֆոնդի կառավարման բարելավման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով: Ատենախոսությունը հաստատվել է, և ՀՀ ԲՈԿ-ի նախագահի 2020 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 15Ա-վ1 հրամանով ինձ շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ քննարկել ինձ պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին սույն դիմումը՝ «Քաղաքացուն բացառիկ դեպքերում պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կարգը սահմանելու մասին»

Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 89-Ն որոշման համաձայն, քանի որ, ըստ նշված որոշման հավելվածի երկրորդ կետի երրորդ ենթակետի, քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու բացառիկ դեպքերի շարքում է «գիտական աստիճան ունեցող քաղաքացուն կրթության և գիտության բնագավառներում գործունեության համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախկինում տարկետում տրված լինելու և քաղաքացու կողմից Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված գիտական և գիտատեխնիկական գործունեությամբ զբաղվելու հանգամանքները»:

Կից ներկայացնում եմ սույն դիմումի մեջ նշված հանգամանքները հավաստող անհրաժեշտ փաստաթղթերի էլեկտրոնային պատկերատպված (սքանավորված) տարբերակները.

1. Գիտական աստիճանի վկայագիր,
2. Ասպիրանտուրայում ուսանելու համար ինձ տարկետման իրավունք տրամադրելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 796-Ա որոշում՝ կից հավելվածներով,
3. Զինվորական հաշվառման գրքույկ,
4. Գիտական գործունեության վերաբերյալ փաստաթղթեր.
    - Գիտատեխնիկական ընթացիկ հետազոտություն իրականացնելու մասին տեղեկանք՝ տրված «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի կողմից,
    - Հրապարակված գիտական աշխատանքների ցուցակ,
    - «Asian Journal of Education and Social Studies» արտասահմանյան պարբերականի գրախոս լինելու մասին հավաստագիր,
    - Միջազգային մի քանի գիտաժողովներին իմ մասնակցությունը (զեկուցումների ներկայացումը) փաստող հավաստագրեր,
    - Գիտահետազոտական և գիտակրթական մրցանակների հավաստագրեր:

Դիմումին կից ներկայացված են նաև հետևյալ փաստաթղթերը.

1. Դասախոսական ընթացիկ գործունեության մասին տեղեկանք՝ տրված «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի կողմից,
2. Ինքնակենսագրություն (ակադեմիական CV),
3. Ցինխուայի համալսարանի մագիստրատուրայի դիպլոմի նոտարական թարգմանություն,
4. Նույնականացման քարտ:

Դիմող՝ Արման Ասրյան

23.11.2020թ.